


ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍՏՄԲԼԵԱ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՄԵՐ ՀԶՈՐ, ՀՊԱՐՑ ԱԶԳԸ»

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՅՈՒՄ ԵՎ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱԿ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍՏՄԲԼԵԱՅԻ 77-ՐԴ ՆՏԱՆՇՐՋԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, պատվիրակության հետ միասին, որի կազմում են Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին, կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին ու կառավարության վարչակազմի ղեկավար Ռեւազ Ջավելիձեն, մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ:



Այցի շրջանակներում, Իրակլի Դարիբաշվիլին մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի բացման արարողությանը, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի եւ նրա տիկնոջ Ջիլ Բայդենի անունից համաշխարհային առաջնորդների պատվին կազմակերպված ընդունելությանը, ապա ելույթ ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի ընդհանուր բանավեճի մասնակիցների առջև:

Սեպտեմբերի 22-ին Վրաստանի վարչապետ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՆՏՈՆԻՈ ԳՈՒՏԵՐԵՇ. «ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ԶԱՆՔԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԻ ՄԻՋԵՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԵՑ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ»



Հանդիպմանը քննարկվեցին աշխարհում առկա իրավիճակն ու մարտահրավերները:

Սեպտեմբերի 20-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում, Նյու Յորքում հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի հետ:

Խոսեցին նաեւ Ուկրաինայում շարունակվող պատերազմի մասին, անդրադարձան Հարավային Կովկասի տարածաշրջանի անվտանգության միջավայրին: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն ընդգծեց, որ Իրակլի Դարիբաշվիլու ջանքերով Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ ձեռք բերվեց պայմանավորվածություն, որի արդյունքում Ադրբեյջանն ազատ արձակեց հայ զերիներին, իսկ իր հերթին Հայաստանը կարողացավ քարտեզներ հանձնել Ադրբեյջանին: Վարչապետը պատրաստակամություն հայտնեց շարունակել միջնորդի դերակատարումը տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ապահովման համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԹԵՄ ԱԽՎԵԴԻԱՆԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԲԱՐՉՐ Է ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎՐԱՆՏԵՎՐՄԱՆ ՀԱՐՅՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԸ»

Սեպտեմբերի 19-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով նախարար Թեմ Ախվեդիանին ճանաչողական հանդիպում ունեցավ Վրաստանում Գերմանիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Պիտեր Ֆիշերի հետ:

«Պետնախարարն ընդգծեց երկու երկրների միջեւ առկա գործընկերության եւ սերտ, բարեկամական հարաբերությունների կարևորությունը: Նա շնորհակալություն հայտնեց Վրաստանի ինքնիշխանության, միջազգայնորեն ճանաչված սահմաններում տարածքային ամբողջականության եւ Վրաստանի եվրաինտեգրման հարցում Գերմանիայի ուժեղ աջակցության համար: Հանդիպումն ընդգծեց Գերմանիայի կարևոր դերը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործում, ներառյալ միջնորդությունն ու ներգրավվածությունը նպաստե-



լու պատերազմի ց քայքայված հասարակությունները միջեւ վստահության ձեւավորմանը»,- ասված է տեղեկատվության մեջ: Հանդիպմանը մանրամասն քննարկվեց Վրաստանի բռնազավթված շրջաններում մարդու իրավունքների եւ հումանիտար տեսանկյունից ծանր իրավիճակը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՆՈՐԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Սեպտեմբերի 21-ին նորանկախ Հայաստանն ու համայն հայությունը նշում են Անկախության հռչակման 31-րդ տարեդարձը:



Հայաստանի Անկախության մասին հռչակագիրն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում՝ 1990թ. օգոստոսի 23-ին: Հռչակագրով լուծարվեց Հայկական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, եւ հռչակվեց անկախ Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ, 1991թ.

սեպտեմբերի 21-ին հանրապետության անցկացվեց խՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Չայնի իրավունք ունեցող քաղաքացիների 94,99 տոկոսը «կողմ» քվեարկեց անկախությանը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

«ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԿՆՔՎԻ, ԵԹԵ ՃԱՆԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ 29 800 ՔԱՌԱՎՈՒՄԻ ԿՄ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱԿ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍՏՄԲԼԵԱՅԻ 77-ՐԴ ՆՏԱՆՇՐՋԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 23-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ելույթ ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանում:



Իր խոսքում Հայաստանի վարչապետն անդրադարձավ վերջին ժամանակներում Հայաստան-Ադրբեյջան սահմանի վրա տեղի ունեցած իրադարձություններին, խոսեց հիմնախնդրի կարգավորման ուղիների, հարցի լուծման գործում միջազգային հանրության մասնակցության անհրաժեշտության մասին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԻ ՃԱՆԱՊՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆՊԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի արտակարգ եւ լիազոր նորանշանակ դեսպան Աշոտ Սմբատյանը ճանաչողական հանդիպումներ է անցկանում Վրաստանի ղեկավարների հետ:

Մասնավորապես, նա հանդիպում ունեցավ Վրաստանի պաշտպանության նախարար Ջուանչեր Բուրժուլաձեի, Վրաստանի պետական անվտանգության ծառայության ղեկավար Գրիգոր Լիլուաշվիլու, Վրաստանի խորհրդարանի նախագահի տեղակալ Արչիլ Թալալաձեի, խորհրդային խմբակցության ղեկավար Մամուկա Միլինարաձեի, Վրաստանի ընդդիմադիր «Լեւոն քաղաքական խմբի» նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հետ:

Կողմի ներկայացուցիչները շնորհավորեցին դեսպանին նոր պաշտոնի կապակցությամբ եւ հաջողություններ մաղթեց:

Ճանաչողական հանդիպմանը կողմերը խոսեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ բարիդրացիական ու բարեկամական հարաբերությունների մասին: Նշվեց, որ Վրաստանն աջակցում է հավասարակշռված քաղաքականությանը, որը նպաստում է տարածաշրջանում կայունությանը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Հանդիպմանը վրացական

ՄԱԿ-Ի ՂԵՒՎՎՈՐ ԱՍՍՐԲԵԱ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ ՈՒ ՄԵՐ ՀՅՈՐ, ՀՊԱՐՏ ԱԶԳԸ»

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՅՅՅ ԵՎ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՄԱԿ ՄԱԿ-Ի ՂԵՒՎՎՈՐ ԱՍՍՐԲԵԱՅԻ 77-ՐԴ ՆՏԱՏՐՅԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իրակլի Ղարիբաշվիլին, Նյու Յորքում ելույթ ունենցավ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 77-րդ նստաշրջանում: Իր խոսքում վարչապետն անդրադարձավ նորանկախ Վրաստանի պատմության 30-ամյա ժամանակաշրջանին՝ ներկայացնելով ձեռքբերումներն ու մարտահրավերները: Վարչապետը նշեց, որ երեսուն տարի առաջ Վրաստանը դարձել է ՄԱԿ-ի ընտանիքի անդամ, երկիրը հասկացել է տարածաշրջանի եւ ամբողջ աշխարհի ընդհանուր արժեքները պաշտպանելու պարտավորությունը:

Այսօր մենք հավաքվել ենք, որպեսզի վերանայենք որդեգրած սկզբունքներն ու առաջընթացը, որն արձանագրել ենք մենք՝ միջազգային հանրությունը, Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումից ի վեր: 1946 թվականին իր առաջին նիստում հիմնադիրները խոստացան միավորվել՝ համաշխարհային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար:

Չնայած զգալի առաջընթացին, պետք է խոստովանել, որ այս կազմակերպության անդամ երկրների դեմ ագրեսիայի գործողություններ դեռևս իրականացվում են: Եվ սրանք հենց այն ակտերն են, որոնք հանգեցրին երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ՄԱԿ-ի ստեղծմանը:

2008 թվականին Ռուսաստանը ներխուժեց իմ երկիր՝ օկուպացնելով մեր երկրի տարածքների 20 տոկոսը: Այդ պահին միջազգային հանրությունը դատապարտեց այդ ագրեսիան, այդուհանդերձ մենք համոզվեցինք, որ աշխարհի ժողովրդավարական երկրները պետք է միասին աշխատեն՝ ապահովելու ազատության եւ խաղաղության հաղթանակը:

Այսօր ես պատիվ ունեմ ներկայացնելու Վրաստանը՝ մեր հզոր, հպարտ եւ ազատատենչ ժողովրդին, որը պահպանել է իր ժառանգությունը ու պատմությունը՝ միաժամանակ զարգա-



նալով եւ հարմարվելով 21-րդ դարի աշխարհաքաղաքական իրականությանը, - հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին ու հավելեց, թե երկրի 20 տոկոսը դեռևս օկուպացված է Ռուսաստանի կողմից, մենք թույլ չենք տալիս որ մարտահրավերը փոխի մեր էությունը: Այդ իսկ պատճառով շարունակում ենք հանդես գալ բարձր քաջային կարգում եւ մշտապես փորձում ենք նպաստել միջազգային հանրության աշխատանքին:

Նյու Յորք կատարած այցի շրջանակներում, վարչապետն անցկացրեց երկկողմ, բարձր մակարդակի հանդիպումներ: Մասնավորապես, Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի, Թուրքիայի նախագահ Ռեջեօ Թայիօ Էրդողանի, Շվեյցարիայի Համադաշնության նախագահ Իգնասիո Կասիսի հետ:



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ԿԱՅԱՑԱԿ ԵՂԻՍԱԲԵԹ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳՈՒՅՈՒ ՅՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Բրիտանիան հրաժեշտ տվեց գրեթե 7 տասնամյակ երկիրը կառավարող թագուհուն: Եղիսաբեթ Երկրորդի հուղարկավորությանը մասնակցեցին շուրջ 40 երկրի ղեկավարներ: Սեպտեմբերի 19-ին Ուեստմինստերյան աբբայությունում կայացավ հրաժեշտի արարողությունը, որին մասնակցում էին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը:

Նրանք մասնակցեցին նաև Միացյալ Թագավորության թագավոր Չարլզ Երրորդի կողմից կազմակերպված պաշտոնական ընդունելությանը, որը տեղի ունեցավ Բուքինգհեմյան պալատում:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲԼԻՉԱՑԻԱ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը երկրում մասնակի մոբիլիզացիա է հայտարարել:

Ռուսաստանի Հանրությունում մասնակի զորահավաքի շրջանակներում, զորակոչի կենթարկվեն միայն պահեստազորը եւ զինվորական փորձ ունեցող քաղաքացիները: Մինչև զորամասեր ուղարկելը, ժամկետային զինծառայողները կանցնեն լրացուցիչ ռազմական պատրաստություն հաշվի առնելով հատուկ ռազմական գործողության փորձը: Մասնակի զորահավաքի շրջանակներում, ընդհանուր առմամբ, զորակոչվելու է 300 հազար պահեստազոր:

Նշենք, որ Ռուսաստանի որոշ քաղաքներում բողոքի ցույցեր են սկսվել մասնակի մոբիլիզացիայի դեմ: Ընդ որում՝ Ուկրաինայում պատերազմի սկզբից ի վեր Ռուսաստանում հակապատերազմական ցույցերի ժամանակ ձերբակալվել է 16 500 մարդ:

ԴՐՁՍՏԱՆ-ՏԱԶԻԿՍՏԱՆ ՍՈՒՐԱԳՎԵԼ Է ԶՈՐՔԵՐԻ ՀԵՏՔԱՆԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանի ընդհանուր հատվածում իրադրության կայունացման շուրջ Դրղզստանի եւ Տաջիկստանի միջև ստորագրված արձանագրությունը նախատեսում է մարտական գործողությունների դադարեցում, ինչպես նաև ուժերի հետքաշում շփման գծից: Նշենք, որ սեպտեմբերի 16-ին Դրղզստանի ու Տաջիկստանի սահմանագծում տեղի ունեցավ զինված ընդհարում, երկու կողմերը ունեին զոհեր եւ վիրավորներ:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇՈՏ ՍՄԲՍՏԱՆԻ ՃԱՆԱՊՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՊՐԱՐՄԵՆԻ ՄԵՊԱՄՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հանդիպմանը քննարկվեցին երկու երկրների առանձին գերատեսչությունների միջև երկկողմ համագործակցության ընթացիկ հարցերն ու ապագա ծրագրերը:

րերը:

Սեպտեմբերի 17-ին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը մասնակցեց Ֆրիդրիխ Նաուման հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակի կողմից կազմակերպված «Հայաստան-Վրաստան, անվտանգային մարտահրավերներ, թե՞ մարտահրավերներ անվտանգության համար» («Armenia and Georgia: Security challenges or challenges for security») խորագրով հանրային քննարկմանը:

կազմակերպված «Հայաստան-Վրաստան, անվտանգային մարտահրավերներ, թե՞ մարտահրավերներ անվտանգության համար» («Armenia and Georgia: Security challenges or challenges for security») խորագրով հանրային քննարկմանը:

ՀԱՐՑՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏԵՑԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀՈՒՋՈՂ ՀԱՐՑԵՐԸ



Ամերիկյան «Ազգային ժողովրդավարական ինստիտուտը» (NDI) անցկացրել է քաղաքացիների հերթական հարցումը: Հուլիսի 14-ից օգոստոսի 15-ն անցկացված հարցմանը մասնակցել է Վրաստանի տարբեր տարածաշրջանների 2 104 քաղաքացի:

ՀԱՐՑՈՒՄԸ ՑՈՒՅՑ ՏՎԵՑ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԲԱՐՉՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ

«Ազգային ժողովրդավարական ինստիտուտի» (NDI) հարցման արդյունքների համաձայն, աճել է Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու գործունեության հանդեպ բացասական գնահատականը:

Հարցվածների 12 տոկոսը նախագահի գործունեությունը գնահատել է լավ, 43 տոկոսը՝ միջակ, 40 տոկոսը՝ վատ, 5 տոկոսը չի պատասխանել: Հատկանշական է, որ 2022 թվականի մարտին հարցված բնակչության 24 տոկոսը նախագահի գործունեությունը գնահատել է լավ, 42 տոկոսը՝ միջակ, իսկ 24 տոկոսը՝ վատ, հարցվածների 9 տոկոսը չի պատասխանել:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գործունեությունը լավ է գնահատել հարցվածների 28, միջակ՝ 33, վատ՝ 35 տոկոսը, հարցին չի պատասխանել 4 տոկոսը: Նշենք, որ 2022 թվականի մարտին հարցվածների 26 տոկոսը վարչապետի գործունեությունը գնահատել է լավ, 32 տոկոսը՝ միջակ,

իսկ 36 տոկոսը՝ վատ, հարցին չի պատասխանել՝ 6 տոկոսը:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 75 ՏՈԿՈՍԸ ԵՎՐԱԻՆՏԵԳՐԱՆ ԿՈՂՄԱԿԻՑ Է

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) եւ CRRC-Վրաստանի կողմից այսօր հրապարակված տվյալների համաձայն, հարցվածների 75 տոկոսը կողմ է Վրաստանի եվրաինտեգրմանը, իսկ 25 տոկոսը կարծում է, որ երկրի կառավարության քաղաքական կամքի բացակայությունն է անդամակցության գլխավոր խոչընդոտը:

Նման միտում է կրկնվում նաև ՆԱՏՕ-ի հարցով. քաղաքացիների 69 տոկոսը կողմ է Հյուսիսատլանտյան դաշինքի անդամակցությանը: Որպես հիմնական խոչընդոտներ հարցվածների մեծամասնությունը նշում է Ռուսաստանի եւ վերջինս կողմից բռնազավթված տարածքների գործոնը:

Նշվում է նաև, որ բնակչության ռեկորդային տոկոսն (62 (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՌՈՒՄ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ. 212-ՐԴ ՕՐ

ՈՒԿՐԱԻՆԱՆ ՎԵՐԱՀՅՍԿՈՒՄ Է ԽԱՐԿՈՎԻ ՄԱՐԶԻ 118 ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

Խարկովի մարզում վերականգնվել է վերահսկողությունը օկուպացված 118 բնակավայրերի նկատմամբ. այս մասին հայտարարել է Ուկրաինայի ներքին գործերի փոխնախարար Եվգենի Ենինը:

Կիեւում ասում են, որ այսպես կոչված «մաքրման օպերացիան» այս պահին ընթանում է 12 բնակավայրում:

ՄՈՍԿՎԱՆ ԹԱՔՏՆՈՒՄ Է ԻՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՆԵՐԸ...

Ուկրաինայի արտաքին հետախուզության տվյալներով, Ուկրաինայի հետ պատերազմում Ռուսաստանն ունի ավելի քան 55 հազար զոհ եւ ավելի քան

60 հազար վիրավոր, միայն 10 տոկոսը կկարողանա վերադառնալ ծառայության, 90 տոկոսը՝ լուրջ վնասվածքներով:

Գերատեսչությունը նշում է, որ Ռուսաստանը թաքցնում է իրական կորուստները:

...ԻՍԿ ԸՍՏ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄԻ

Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգույի խոսքով, սկզբնական շրջանում Ուկրաինայի զինված ուժերը կազմում էին մոտ 201-202 հազար: Այս ընթացքում նրանց ՁՈՒ թիվը պակասեց ավելի քան 100 հազարով, որից 61 հազար 207-ը՝ զոհեր են, 49 հազար 368-ը՝ վիրավոր, - ասել է Շոյգուն:

Ըստ նրա, ռուսական կողմից զոհվել է 5 937 մարդ:

ԿԱՅԱՑԱԿ ԳԵՐԻՆԵՐԻ ՓՈՒՆԱՆԱԿՈՒՄ

Ինչպես տեղեկացրել է Ուկրաինայի նախագահի աշխատակազմը, Ռուսաստանը գերությունից ազատ է արձակել 215 ուկրաինացի զինծառայողի, այդ թվում՝ 124 սպայի: Ընդ որում, ազատ արձակվածներից 108-ը ծառայում էին «Ազովի» զույգարտակում:

Տեղակատվության մեջ նշվում է, որ ուկրաինական կողմը իր 5 առավել ճանաչված զինծառայողներին ազատելու համար ռուսական կողմին է հանձնել 55 գերի զինծառայողի:

Ուկրաինացի զինծառայողների ազատ արձակման դիմաց Ռուսաստան են վերադարձվել ռուս օդաչուներն ու զինվորները:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ


2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅՈՎ

Վրաստանի կառավարող «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ կառավարող կուսակցությունը պատրաստ է 2024 թվականից ընտրություններում լայնորեն կիրառել էլեկտրոնային տեխնոլոգիաները:

Հիշեցնելով, որ Եվրամիության ներկայացրած 12 հանձնարարականների թվում առաջիններից մեկը «Վրաստանի ընտրական օրենսգրքի» վերանայումն է, Իրակլի Կոբախիձեն նշեց, որ համապատասխան բարեփոխումն իրականացնելու նպատակով Վրաստանի խորհրդարանում ստեղծվել է աշխատանքային խումբ: Այն կնշակի օրենքների նախագծերի փաթեթ:

- Աշխատանքային խմբում ներկայացված առաջարկների մի մասը վերաբերում էր ընտրական գործընթացում էլեկտրոնային տեխնոլոգիաների համատարած ներդրմանը: Անցյալ տարի քվեարկության ընթացակարգն իրականաց-

վել է Թբիլիսիի Կրծանիսի շրջանում ամբողջությամբ էլեկտրոնային սարքավորումների միջոցով: Այս տարի սակրեբուլոյի միջանկյալ ընտրություններն անցկացվել են Բաթումի քաղաքապետարանի ութ ընտրական տեղամասում՝ օգտագործելով էլեկտրոնային սարքավորումներ,- ասաց Իրակլի Կոբախիձեն եւ հավելեց, որ էլեկտրոնային տեխնոլոգիաներով քվեարկությունը կտարածվի ընտրողների առնվազն 70 տոկոսի վրա:



ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՂՆ Է

Սեպտեմբերի 21-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի ծննդյան տոնը: Տոնի առիթով Վրաստանի բոլոր եկեղեցիներում մատուցվեց պատարագ: Այդ օրը Մախաթի լեռան վրա գտնվող Իվերիայի Աստվածածնի սրբապատկերի անվան եկեղեցի վերադարձվեց Աստվածամոր սրբապատկերի «Մխիթարիչ» կրկնօրինակը:

ՕՐԵՆԱԴԻՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՐԵՔ ԿՈՄԻՏԵՆԵՐՆ ՈՒՆԵՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅՆԵՐ

Սեպտեմբերի 20-ին Վրաստանի խորհրդարանն իր լիազուցումը տարածաշրջանային քաղաքականության եւ ինքնակառավարման կոմիտեի նախագահ ընտրեց Կա-

խի Կախիշվիլուն, սպորտի եւ երիտասարդության հարցերով կոմիտեի ղեկավար Իրակլի Մեծմարիշվիլուն, իսկ առողջապահության կոմիտեի նախագահ՝ Ջազա Լոմինաձեին:

Խորհրդարանական կոմիտեներում վերոնշյալ պաշտոնները թափուր էին նրանից հետո, երբ «հանրությանն ավելի շատ ճշմարտություն ասելու» պատրվակով կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը լքել է «Ժողովրդի ձայն» քաղաքական շարժումն էին հիմնել Սոզար Սուբարին, Միխեիլ Դովելաշվիլին եւ Դմիտրի Խունդաձեն:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՑՈՏՆԵ ԴԱՎԼԱՇՎԻԼԻՆ՝ ԵՐԿՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԻԴԻՑ



Վրաստանի խորհրդարանը՝ 87 կողմ եւ 1 դեմ ձայներով, Ցոտնե Դավլաշվիլուն նշանակեց Վրաստանի գլխավոր աուդիտորի պաշտոնում:

Ցոտնե Դավլաշվիլին վերջին 16 տարիներին աշխատել է ֆինանսների նախարարու-

թյունում: 2015 թվականից նա Վրաստանի ֆինանսների փոխնախարարն էր, իսկ 2013 թվականից զբաղեցնում էր զանապետական ծառայության ղեկավարի պաշտոնը: Նախորդ կառավարության օրոք՝

2006-2012 թվականներին, Ցոտնե Դավլաշվիլին աշխատել է նաեւ բյուջետային վարչության տարբեր պաշտոններում:

Ցոտնե Դավլաշվիլին գլխավոր աուդիտորի պաշտոնում փոխարինեց Իրակլի Մեքվաբիշվիլուն: Վերջինիս աուդիտի ծառայության ղեկավարի պաշտոնավարման ժամկետը սկսվել է 2017 թվականից եւ լրացել սեպտեմբերի 20-ին:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԵՎ «ՃԱՆԱԴԱՐԶԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանը հաստատեց վարչական իրավախախտումների օրենսգրքում եւ «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքում փոփոխությունները: Չեր ուշադրության ենք ներկայացնում վարորդական ըննությունների, ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վիճակագրությունը:



ՄԵՔԵՆԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ՍԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 300 ԼԱՐԻԻ ՏՈՒԳԱՆՔ

Պատժելի կլինի տրանսպորտային միջոցի միտումնավոր սահեցումը կամ սահելու միջոցով շրջանաձեւ պտույտ կատարելը, այսպես կոչված՝ դրիֆտը: Այս գործողություն կատարողը կտուգանվի 300 լարիով: Օրենքի նախագծում նշվում է, որ եթե նշված արարքը հանգեցրել է տրանսպորտային միջոցի, բեռների, ճանապարհի կամ այլ շինության, գույքի կամ մարդու մարմնի թեթեւ վնասում, ապա վարորդը կտուգանվի 500 լարիի չափով:

Օրենքով սահմանվում է, որ նշված իրավախախտման համար պատասխանատվություն չի առաջանա այն դեպքում, երբ արարքը կատարվել է օրենքով սահմանված կարգով անցկացվող մարզական միջոցառմանը մասնակցելու ժամանակ:

ԻՆՉՊԵՍ ՊԱՐՁԵԼ՝ ՏՈՒԳԱՆՎԱԾ ԵՍ, ԹԵ՞ ՈՉ

Մեքենայի դիմապակու մաքրիչների վրա այսուհետեւ տուգանքի կտրոններ չեն դրվելու:

Խորհրդարանի՝ «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքում կատարած փոփոխությունների համաձայն, տուգանային կտրոնը կուղարկվի սահմանված կարգով հասցեատիրոջը, միաժամանակ, կառաքվի կարճ հաղորդագրություն:

Նշենք, որ փոփոխության համաձայն, մայթերին եւ հետիոտնի անցագոտում կայանված մեքենաները էվակուացիայի կենթարկվեն:

ՎՐԱՍԱՆՈՒՄ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ 83 ՏՈՎՈՍԸ ՀԻՆ Է

Վրաստանի ազգային վիճակագրության ծառայության (Geostat) հրապարակած 2021 թվականի ցուցանիշի համաձայն, Վրաստանում գրանցված տրանսպորտային միջոցների 83,2 տոկոսը 10 տարուց ավելի է շահագործվել:

Գերատեսչության տվյալներով, 2021 թվականին Վրաստանում գրանցվել է 1 մլն 477 հազար 293 տրանսպորտային միջոց: Դրանցից 1 մլն 254 հազար 851-ը մարդատար ավտոմեքենա, 107 հազար 983-ը՝ բեռնատար, 54 հազար 684-ը՝ ավտոբուսներ կամ միկրոավտոբուսներ, 59 հազար 775-ը՝ հատուկ նշանակության մեքենաներ:

Նույն վիճակագրության համաձայն, 5-10 տարվա վաղեմության տրանսպորտային միջոցների թիվը գերազանցում է 186,4 հազարը, 2-5 տարվանը՝ 33 հազարը, 2-ից ցածրը՝ 22,1 հազարը:

Թեթեւ մարդատար մեքենաների ամենամեծ մասը գրանցված է մայրաքաղաք Թբիլիսիում՝ 448,8 հազար, երկրորդ տեղում Իմերեթին՝ 175,2 հազար, լավագույն եռյակում է Քվեմո Քարթլին՝ 125,3 հազար ավտոմեքենայով:

ՄԵԿ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԽԱԽՏՈՒՄ

Վրաստանի ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) տվյալներով, 2022 թվականի երկրորդ եռամսյակում գրանցվել է ճանապարհային երթևեկության կանոնների խախտման ավելի քան 1 մլն 064 հազար 047 դեպք, մեծ մասը՝ 586 հազար 534-ը, տեղի է ունեցել Թբիլիսիում:

Թբիլիսիից բացի, ճանապարհային երթևեկության կանոններն ամենից հաճախ խախտվել են Քվեմո Քարթլիում, որտեղ հայտնաբերվել է 94 հազար 135 դեպք, հաջորդում է Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը՝ 85 հազար 308 խախտման դեպքով:

ՆԳՆ-ի փոխանցմամբ, այս տարվա երկրորդ եռամսյակում արագության գերազանցման համար ամենից հաճախ տուգանվել են թեթեւ մարդատար ավտոմեքենաների վարորդները. տուգանքների ընդհանուր թիվը կազմել է 240 հազար 983, որից 108 հազար 148-ը գրանցվել է Թբիլիսիում:

«Կանգնել արգելվում է» եւ «Կանգառն արգելվում է» արգելող նշանների, ինչպես նաեւ նմանատիպ պահանջների խախտման համար նշանակվել է 171 հազար 990 տուգանք:

Բջջային հեռախոսներով խոսելու եւ ամրագոտիներ չկապելու պատճառով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերը դեռեւս բարձր են ողջ Վրաստանում: Վարորդի կամ նրա կողքին նստած ուղեւորի կողմից ամրագոտիներ չօգտագործելու համար տուգանվել է 62 հազար 734, հեռախոսից օգտվելու համար՝ 31 հազար 929 վարորդ:

Կարգավորողի կամ լուսակրի կանոնները խախտելու, առաջնահերթության կամ արգելման նշանի պահանջները խախտելու, վազանցի, անցման, երկաթուղային հատման կանոնների խախտման, երթևեկության տրանսպորտային միջոցների խոչընդոտ ստեղծելու համար տուգանվել է 52 հազար 660 վարորդ:

Նշենք, որ երկրորդ եռամսյակը ներառում է մայիսի 15-ից օգոստոսի 15-ն ընկած ժամանակահատվածը:

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԵՄՊԱՆՆԵՐՆ ԱՆԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՅԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 21-ին Վրաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Չասան Խալիլը եվրոպական 8 երկրի՝ Էստոնիայի, Եվեյցարիայի, Գուրմաստանի, Եվեդիայի, Բուլղարիայի, Նորվեգիայի, Իտալիայի, Նիդերլանդների դեսպանների, միջազգային տարբեր կազմակերպությունների և Ախալքալաքի տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ, մունիցիպալիտետի Սակրեբուլոյի շենքում հանդիպեցին երիտասարդների հետ, լսեցին նրանց և քննարկեցին խնդիրները:



Տեղական ինքնակառավարման մարմինների հանդիպմանը մասնակցում էին Ախալքալաքի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, Սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, տեղական իշխանությունների այլ ներկայացուցիչներ, ինչպես նաև Ախալքալաքի հասարակական կազմակերպությունների որոշ ներկայացուցիչներ: Տեղական իշխանությունների և եվրոպական երկրների արտակարգ ու լիազոր դեսպանների հետ խնդիրների քննարկման էին եկել քաղաքի դպրոցների բարձր դասարանի աշակերտները: Նույն օրը Ախալքալաքի Սամցխե-Ջավա-

խաթի պետական համալսարանում Վրաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Չասան Խալիլը, Վրաստանում ներկայացված 8 երկրների դեսպանների ուղեկցությամբ, բացեց «Երեխաների իրավունքների կենտրոնը»: Նմանատիպ կենտրոններ գործում են նաև Վրաստանի 7 այլ բուհերում: Կենտրոնը պետք է նպաստի երեխաների իրավունքների պաշտպանությանը: Այն կհամագործակցի դպրոցների հետ՝ վերջիններիս համար երեխաների իրավունքների վերաբերյալ սեմինարներ անցկացնելու նպատակով, որոնցում մասնակցում են նաև ուսուցիչները:

ԾՈՎԸ «ՄՈՏԵՆՈՒՄ Է»...

Ակտիվորեն շարունակվում են Բաթումի (Անգիսա)-Ախալցխի ներքին համապետական նշանակության մայրուղու Խուլո-Ջարգվի հատվածի վերակառուցման աշխատանքները:



Ծրագիրը, որը ֆինանսավորում է Քուվեյթի հիմնադրամը, բաժանված է 2 հատվածի և, ընդհանուր առմամբ, վերականգնում-վերակառուցում իրականացվում է 42 կմ երկարությամբ ճանապարհին: Վերանորոգված Խուլո-Ջարգվի հատվածը ամենակարճ ճանապարհով կկապի Ախալցխի և Աջարիայի շրջանները: Վերականգնողական հատվածը սկսվում է Խուլո գյուղից, անցնում Գոդերծեի լեռնանցքով և հասնում Ադիգենիի Ջարգվա գյուղ: Թարմացված երթուղով Բաթումից

Ախալցխի ճամփորդության տևողությունը կկրճատվի 1,5 ժամով: Շինաշխատանքների արժեքը կազմում է 95 մլն 689 հազար 302 լարի: Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ տեղը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՅ՝ ԹԲԻԼԻՍԱԶԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 17-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում կայացավ Վրաստանում Հայաստանի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի հանդիպումը Թբիլիսիի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:



Հանդիպումն սկսվեց Վիրահայոց թեմի առաջնորդի օրհնությամբ: Աշոտ Սմբատյանի ողջույնից հետո, հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանի ձևաչափով: Ներկաների հարցերը վերաբերում էին Մայր Հայրենիքում տիրող իրավիճակին, սեպտեմբերի 13-ին Հայաստանի նկատմամբ Ադրբեյջանի սանձազերծած զավթողական գործողություններին, հայ-վրացական հարաբերություններին, թբիլիսահայ համայնքի ձեռքբերումներին ու խնդիրներին, պատասխանեց ներկաներին հետաքրքրող հարցերին:

Վիրահայոց թեմի առաջնորդը համարում արեց հանդիպումը և նորանշանակ դեսպանին մաղթեց արգասաբեր գործունեություն ի փառս երկու քրիստոնյա ազգերի բարեկամության, հայ-վրացական դիվանագիտական հարաբերությունների բազմակողմ ու հարաճուն զարգացման: Հանդիպման վերջում արտակարգ և լիազոր դեսպան Սմբատյանը շրջայց կատարեց կենտրոնում գործող նախարարարանում, ծանոթացավ հայերենի ուսուցման մեկօրյա դասընթացների և գեղարվեստական խմբերի գործունեությանը:

ՄԻՄՆ ԿԻԱՋԵ

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 21-ին Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետների ինքնակառավարման թափանցիկության և հաշվետվության բարելավման՝ ծրագրի շրջանակներում, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանն ու ծրագրի մենեջեր Մախարե Մացուկատովը հանդիպեցին քաղաքացիական խորհրդի խորհրդատուների տարբեր ոլորտների ներկայացուցիչներին:



Քաղաքացիական խորհրդի խորհրդատուների առաջին նիստի գլխավոր նպատակն է բնակիչների հետ շփման արդյունքում պարզել և Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարան հասցնել այն խնդիրները, որոնք առկա են մունիցիպալիտետում և անհանգստացնում են տեղական բնակչությանը, որպեսզի հետագայում ինք-

նակառավարման մարմինների ուղղակի միջնորդությամբ և քաղաքացիների մասնակցությամբ թափանցիկ լուծվեն մունիցիպալիտետում առկա առաջնահերթ խնդիրները:

3 ԱՄՍՈՒՄ ԱՐԴԵՆ ԾԱԼԿԱՅԻ «ԴԱՇԲԱՇԻ ԱՂԱՄԱՆԴ» Ե ԱՅՅԵԼԵԼ 80 ՀԱՉԱՐ ԶԲՈՍԱՇՐՋԻԿ

Ինչպես հայտնել են Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչությունից, Վրաստանի ամենահայտնի պահպանվող տարածքներից առաջին քառյակում են Պրոմեթեոսի քարանձավը, Մարտվիլի կիրճը, Սաթախիլան և Ծալկայի կիրճը (Դաշբաշի «Աղամանդե կամուրջը»):



Միայն այս տարվա հունիսին բացված Ծալկայի կիրճ է այցելել 80 հազար զբոսաշրջիկ, որոնցից 65 տոկոսը Վրաստանի քաղաքացիներ են, իսկ 35 տոկոսը՝ օտարերկրացիներ: Վրաստանի պահպանվող տարածքներ այցելությունների շարքում այցելուների քանակով Ծալկայի կիրճը զբաղեցնում է 4-րդ

Հիշեցնենք, որ կամուրջը բացվել է այս տարվա հունիսի 14-ին:

ՀԱՐՑՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԲԱՑԱՐԱՅՏԵՑԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 2-րդ էջում) տոկոս) ատում է, որ Վրաստանը ժողովրդավարական երկիր չէ և իր հարեւանների համար ժողովրդավարության լավ օրինակ չէ (56 տոկոս):

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԹՐԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐ ԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ազգային ժողովրդավարական ինստիտուտի» (NDI) հարցման արդյունքների համաձայն, Վրաստանի կառավարող «Վրացական երազանք» կուսակցության նկատմամբ ամենադրական վերաբերմունքն ունեն ազգային փոքրամասնությունները: Շուրջ 10 տարի երկիրը կառավարող «Վրացական երազանք» կուսակցության գործունեությունը ազգային փոքրամասնությունների շրջանում անցկացված հարցման համաձայն, դրական է գնահատել 46, բացասական 41 տոկոսը, չի պատասխանել 12 տոկոսը: Ընդդիմադիր կուսակցությունների աշխատանքը դրական է գնահատել ազգային փոքրամասնությունների 42 տոկոսը, 38 տոկոսը՝ բացասական, իսկ 20 տոկոսը չի պատասխանել:

ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐԸ ՑԱԾՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ Ե

«Ազգային ժողովրդավարական ինստիտուտի» (NDI) և «Հետազոտական ռեսուրսների կրկայան կենտրոնի» (CRRC) համատեղ ու-

սումնասիրության համաձայն, հարցվածների մեծամասնությունը Վրաստանի կրթական համակարգի առջեւ ծառայած ամենամեծ խնդիրը համարում է կրթության ցածր որակը, առցանց ուսուցմանն առնչվող դժվարություններն ու բուհերում ուսման բարձր վճարը: Հարցվածների 31 տոկոսը նշում է, որ հիմնական մարտահրավերը կրթության ցածր որակն է ընդհանրապես, 30 տոկոսին անհանգստացնում են առցանց ուսուցման հետ կապված դժվարությունները, իսկ 23 տոկոսը նշում է բուհական կրթության ցածր որակը:

ԻՆՉ ՄՊԱՍԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Հարցումը ցույց տվեց, որ մախորդի համայնքում, 16 տոկոսով ավելացել է այն մարդկանց թիվը, ովքեր հանդես են գալիս Ռուսաստանի հետ տնտեսական հարաբերությունների սահմանափակման կողմնակից (39 տոկոս): Հարցման ենթարկվածների մեծ մասը գտնում է, որ երկրում տնտեսական իրավիճակը կբարդանա (80 տոկոս), կակտիվանան ռուսամետ ուժերը (57 տոկոս), չեն բացառում Ռուսաստանի ռազմական նոր ագրեսիան (52 տոկոս): Որպես հիմնախնդիր կարգավորման միջոց՝ հարցման ենթարկվածների 82 տոկոսը համարում է եվրամիությանն անդամակցությունը, ինչը հնարավորություն կտա թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական առումով բարելավել իրավիճակը: